ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիս, 2025 թվականի № 41-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 137-Ա որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վասակ Դարբինյանը Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի ընտրության արդյունքներով ստացել է 4 ձայն (Հանրային հեռարձակողի խորհրդի անդամների ձայների կեսից ավելին), իսկ Հանրային հեռարձակողի խորհրդի անդամների մնացած ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝ Արա Շիրինյան՝ 3 ձայն, «Բոլորին դեմ»՝ 0 ձայն, և քվեարկությանը մասնակցել են Հանրային հեռարձակողի խորհրդի բոլոր անդամները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ ընտրել Վասակ Դարբինյանին:
2. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի պաշտոնում Վասակ Դարբինյանի պաշտոնավարման ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 3-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 16-ը ներառյալ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Վ. ՕԼՔԻՆՅԱՆ

2 հունիս, 2025 թվականի
ք. Երևան